

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2015թ. հուլիսի 18 – ին Մրգաստանի գյուղապետարանի շենքում տեղի ունեցավ Մրգաստան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 1 – ին կիսամյակի համար: Ներկա էին համայնքի բնակիչներ ավագանու անդամներ ինչպես նաև Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ պ-րն Գոռ Հովհաննիսյանը:

Իր ելույթը պ-րն Խաչատրյանը սկսեց ողջույնի խոսքով.

Հարգելի ավագանու անդամներ, համագյուղացիներ և հյուրեր.

Ձեզ եմ ներկայացնում Հ.Հ. Արմավիրի մարզի, Մրգաստանի գյուղական համայնքում 2015թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, և այլ օրենքներով ինձ ընձեռնված իրավասության շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել եմ պետության կողմից պատվիրակված, ինչպես նաև կամավոր լիազորություններ:

2014 թվականի դեկտեմբերի 12-ի, թիվ 6 հերթական նիստի, թիվ 55-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2015թվականի բյուջեն:

Համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելուց հետո տարեսկզբին մշակվել և ավագանու անդրանիկ նիստում հաստատվել է՝

1, Տարեսկզբի ազատ մնացորդը:

2, Գյուղապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների, թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

3, Համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար գործող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

4, Համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը:

Ընդունված փաստաթղթերը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջների, ուղարկվել է Արդարադատության նախարարություն փորձաքննության:

Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը: Իմ հանձնարարությամբ գյուղապետարանի քարտուղարի կողմից կատարվել է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրությունների վավերացումը:

Պատասխանվել է մարզպետարանից և այլ կազմակերպություններից եկած գրություններին, ինչպես էլեկտրոնային՝ այնպես էլ թղթային տարբերակով:

Ավագանու որոշումները, ինչպես նաև համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները ժամանակին ներկայացվել է մարզպետարան օրենքով սահմանված ժամկետներում:

Ավագանու հաստատմանն է ներկայացվել՝

1, Ամենամյա գույքագրման փաստաթղթերը,

2, Մրգաստանի գյուղական համայնքում կատարվող աղբահանության պայմանագիրը և սան.մաքրման սխեման:

3, Գերեզմանատների իրավական կարգավիճակի վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև լրացուցիչ գերեզմանատեղերի տրամադրման պայմանները և սակագները:

Հաշվետու ժամանակաշրջանում հաստատված բյուջեի.

Այժմ նշեմ բյուջեից կատարվա ծախսերի մասին

Վարչական մասի՝

29 196 600 / քսանհինգ միլիոն մեկ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր/ դիմաց ծախսվել է 11, 714 000 /տասանմեկ միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր /դրամ:

Ֆոնդային մասի՝

5782 600 /Յիսկ միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր / դիմաց ծախսվել է 273 600 /երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր/ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել և մուտքագրվել է՝

Հողի հարկ 490 900 /չորս հարյուր իննսուսու հազար ինը հարյուր /դրամ,

Գույքահարկ ավտոմեքենաներ 975 470 / ինը հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր յոթանասուն/ դրամ,

Գույքահարկ շենք-շինություն 13 100/տասներեք հազար հարյուր/ դրամ,

Ծխախոտի և խմիչքի վաճառքի թույլտվության համար 7 000 /յոթ հազար/ դրամ,

Սեփական եկամուտները կազմել է՝ 67,2%:

Նշեմ կատարված աշխատանքները ըստ ոլորտների.

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

«ՏԻՄ» Հ.Հ. օրենքի 33 հոդվածի պահանջների համապատասխան կատարվել է՝

ա/համայնքի բնակիչների հաշվառում

բ/քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի քարտուղարի մոտ, օրենքով սահմանված կարգով:

Դիմած 8 քաղաքացիների դիմումներին տրվել է սպառիչ պատասխան:

Կազմակերպվել է համայնքի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի, պատճենների և կրկնօրինակների տրամադրում համայնքի բնակիչներին:

2.Պաշտպանության բնագավառում իրականացրել են կամավոր լիազորություններ, իմ հանձնարարությամբ աշխատանքներ են տարվել երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ, աջակցել ենք զորակոչին, զորահավաքներին: Այս տարվա զորակոչիկներին ճանապարհել ենք Հայկական բանակ, համայնքում գտնվող հուշարձանի տարածքից, որտեղ կազմակերպվել էր հանդիսավոր արարողություն: Արարողության ընթացքում իրենց մաղթանքի խոսքն են ուղղել զորակոչիկներին գյուղապետարանի աշխատակազմի անունից եւ, դպրոցի տնօրինությունը, համայնքի ավագ բնակիչները:

Աջակցել ենք <<ԴՕՍԱԱՖ>> ՀԿ – ի <<Էջմիածնի ավտոդպրոց>> ՍՊԸ- ում սովորող զորակոչիկներին, որոնց տրվել է ճանապարհաձախս ուսումնառության ընթացքում:

3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա/Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական երեք անգամ, կնքված պայմանագրի հիման վրա Էջմիածնի քաղաքապետարանի բնակ-կոմունալ վարչությունը կատարում է կենցաղային աղբի տեղափոխություն:

բ/ կատարվում է նաև աղբահանության մեկ շնչին 50 դրամ աղբահանության հարկի հավաքագրում:

գ/սահմանված կարգով բնակչությունը իրազեկվել է քաղաքաշինական փոփոխությունների վերաբերյալ:

դ/մեր կողմից կազմակերպվել է համայնքի հանգստի վայր հանդիսացող հուշարձանի տարածքի խնամքը և պահպանությունը: Այս աշխատանքներին ներգրավել ենք նաև գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի աշակերտությանը:

ե/ նոր զարգացող թաղամասում լուծվել է էլեկտրաէներգիայի հարցը տեղադրվել են բետոնե սյուներ:

4.Հողօգտագործման բնագավառում՝

Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

ա/ Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:

բ/ Մշակվել և Կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում է ներկայացվել հողի հաշվեկշիռը, որը նախորոք համաձայնեցվել է համայնքի ավագանու հետ:

5.Տրանսպորտի բնագավառում իրականացվել է հետևյալ կամավոր լիազորությունները. ա/համայնքի տարածքում կառուցված ավտոկանգառի մոտ կառուցվել է և արդեն շահագործվում է ցայտադրյուրը:

բ/կազմակերպվել է համայնքային ենթակայության ճանապարհների վերանորոգում:

6.Առևտրի և ծառայությունների բնագավառ.

ա/համայնքի տարածքում գործում է 4 առևտրի կետեր, որոնք զբաղվում են , խառը ապրանքների վաճառքով:

բ/յուրաքանչյուր եռամսյակ կատարվում է համապատասխան ստուգումներ առևտրի կետերում, հսկողություն է սահմանվում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման նկատմամբ:

գ/օրենքով սահմանված կարգով այն խանութներում, որտեղ վաճառում են ոգելից խմիչք և ծխախոտ տրվում է արտադրանքի իրացման թույլտվություն:

7. Կրթության և մշակույթի բնագավառում

ա/ իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Իրականացվող միջոցառումները արժանանում է մեր աջակցությանը:

բ/ Դպրոցի ավարտական դասարանին «Վերջին զանգի» միջոցառումները կազմակերպելու համար՝ հատկացվել է 50 000 դրամ:

գ/Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ նվիրված մարտի 8-ին, համայնքի կենսաթոշակառու կանանց, գ/պ կին աշխատողներին, դպրոցի ուսուցչական կոլեկտիվին և բուժ. աշխատակազմին համայնքի ղեկավարի կողմից նվիրվել են արժեքավոր նվերներ ընդամենը 350000 դրամի չափով:

դ/Իմ և ավագանու որոշման հիման վրա խրախուսվում են երիտասարդ ընտանիքները, որտեղ ծնվում է 4 և ավելի երեխա:Խրախուսման միջոցը հեռուստացույց է: Այս տարի ևս ուենք նման ընտանիք:

ե/ Աջակցել ենք նպաստառու անապահով ընտանիքի մեկ երեխայի հանգիստը ճամբարում:

8.Սոցիալական ծառայության բնագավառ.

ա/համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:Անօգնական ծերերին, հաշմանդամներին, բժշկական օգնության կարիք ունեցողներին և պարզապես դեղորայք ձեռք բերելու համար մեր կողմից ավագանու քնարկմանն է ներկայացվել դիմումներ, որոնք ստացել են հրատապ լուծում:

բ/առաջին կիսամյակի ընթացքում, այդ նպատակով ծախսվել է 585 000 դրամ, որն իր մեջ ներառում է հանգուցյալների ընտանիքին հատկացված 50 000-ական դրամները:

9.Գյուղատնտեսության բնագավառում՝

ա/աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը, գյուղացիներին բաժանվել է պարարտանյութ, մեկ պարկը 6000/ վեց հազար/ դրամ արժողությամբ:

բ/բերքը համապատասխան կազմակերպություններին հանձնող գյուղացիներին, տրվել են համապատասխան տեղեկանքներ, որպեսզի գյուղացին կարողանա անարգել տեղափոխել այն:

ԳԱՄԿ – ի կողմից տրվող տեղեկատվությունները ժամանակին հասցվում է գյուղացուն հայտարարությունների միջոցով

2015թվականի ապրիլի 24 – ին համայնքում կազմակերպել է միջոցառումներ <<Հիշում եմ և պահանջում >> թեմայի շրջանակներում: Կազմակերպվել է նաև հաղթանակի և խաղաղության տոնին նվիրված միջոցառում, որին մասնակցել են համայնքի գրեթե ամբողջ բնակիչները:

Իմ կողմից կազմակերպվել է աջակցություն գյուղացիներին մասնաորապես համայնք է հրավիրվել կոմբայն, որն օգնում է գյուղացիներին հավաքել հացահատիկի բերքը: Այս

տարի բերքը առատ է և հուսով ենք, որ հողի հարկի պարտաորությունները կատարվելու են ժամանակին:

Այս ամենի հետ համայնքում առկա են հիմնախնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծումներ:

Համայնքը չունի նախադպրոցական հիմնարկ /մանկապարտեզ/:

Համայնքի փողոցները գտնվում են անմխիթար վիճակում չնայած ժամանակ առ ժամանակ մեր կողմից կատարվում են մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Դեռևս համայնքում կան անտուններ, որոնք բնակվում են վագոն տնակներում նախկին մանկապարտեզի շենքը ևս բնակեցված է անտուններով:

Այս տարի համայնքում բնակություն հաստատած մեկ ընտանիքի հատկացվեց հողատարածք և վագոն տնակ, քանի որ նրանք բնակվում էին «Մշակույթի տան» երոթղ հարկում, իսկ շենքը որտեղ տեղակայված է նաև գյուղապետարանը վթարային է և ունի հիմնովին վերանորոգման կարիք:

Այս բոլոր հիմնախնդիրները ներառված են իմ քառամյա ծրագրում, որոնք հուսով եմ լուծում կստանան մինչև 2016թվականը, քանի որ համայնքի բնակչությունը շահագրգիռ է համայնքում որևէ լավ գործ, նախածեռնություն իրականացնելուն: Հուսով եմ, որ մեր ընդհանուր ջանքերով մենք կհասնենք համայնքի հիմնախնդիրների գոնե մասնակի լուծմանը:



ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԻՏԱԲԵՐՔՅՈՒՆ

1. Տանկապարտեզի կառուցում

2. Համայնքի փողոցների վերանորոգում

3. Համայնքում մե քանի ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում